ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-33/24-Ի/INSTLIT

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 29 հունվարի 2024թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Մ.Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Հերիքնազ Վանիկի Որսկանյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված 183 856 156 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, Ծրագրի առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 183 856 156 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա	Կազմակերպություն
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ «Մ.Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ» ՊՈԱԿ

ք. Երևան, Մ. Բաղրամյան 24 Հ/հ՝ 900011024115 ՀՎՀՀ՝ 00005673 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	ք. Երևան, Գր. Լուսավորչի 15 Հ/հ՝ 900018005364 ՀՎՀՀ՝ 02505623 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Նախագահ՝ (ստորագրություն) ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ Կ. Տ.	Կազմակերպության տնօրեն՝ (ստորագրություն) Հերիքնազ Վանիկի Որսկանյան Կ. Տ.
Ծրագրի գիտական ղեկավար՝ (ստորագրություն)	Հերիքնազ Վանիկի Որսկանյան, Ավետիք Վիգենի Իսահակյան

Հավելված 1
29 հունվարի 2024թ.
N 1-33/24-I/INSTLIT պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Հերիքնազ Վանիկի Որսկանյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 հունվարի 2024թ. N 1-33/24-I/INSTLIT պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 183 856 156 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Ակադեմիա	**Կազմակերպություն**
Նախագահ՝	տնօրեն՝
(ստորագրություն)	(ստորագրություն)
ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ	Հերիքնազ Վանիկի Որսկանյան
Կ. Տ.	Կ. Տ.

Հավելված 2
29 հունվարի 2024թ.
N 1-33/24-I/INSTLIT պայմանագրի

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ԱԳ (ազդեցության գործակից) ունեցող պարբերականներում հոդվածներ՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների՝	6
ԱԳ չունեցող, բայց Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ներառված պարբերականներում հոդվածներ՝	10
ՀՀ ԲՈԿ ցանկում ներառված պարբերականներում հոդվածներ՝	40
Այլ պարբերականներում հոդվածներ/հոդված ժողովածուի մեջ՝	40
Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություններ, գրքեր, հոդվածներ՝	1
Գրքեր, մենագրություններ՝	8
Գիտաժողովի նյութեր՝	25
Արտոնագրեր՝	0

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Հերիքնազ Վանիկի Որսկանյան

Կազմակերպության գիտքարտուղար՝ _____ (ստորագրություն) չկա

Կ. Տ.

Հավելված 3
29 հունվարի 2024թ.
N 1-33/24-I/INSTLIT պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	177 646 200	35 529 240	44 411 550	44 411 550	53 293 860
2.	տնտեսական ծախսեր՝	2 760 000	552 000	690 000	690 000	828 000
3.	այլ ծախսեր՝	3 449 956	689 991	862 489	862 489	1 034 987
Ընդամենը՝		183 856 156	36 771 231	45 964 039	45 964 039	55 156 847

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Հերիքնազ Վանիկի Որսկանյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Սոնա Վարդգեսի Սոլակյան

Կ. S.

Հավելված 3.1
29 հունվարի 2024թ.
N 1-33/24-I/INSTLIT պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	**2 760 000**
1.	*էլեկտրաէներգիայի ծառայություն*	1 200 000
2.	*գազի ծառայություն*	0
3.	*ջրամատակարարման ծառայություն*	800 000
4.	*կապի ծառայություն*	700 000
5.	*աղբահանություն*	0
6.	դեռատիզացիա	60 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	**3 449 956**
1.	Սարքեր սարքավորումներ	750 000
2.	Գրասենյակային նյութեր	250 000
3.	Գործուղումներ	500 000
4.	Հրատարակման ծախսեր	1 000 000
5.	Այլ ծախսեր	949 956

Կազմակերպության տնօրեն՝ _____ (ստորագրություն) Հերիքնազ Վանիկի Որսկանյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Սոնա Վարոգեսի Սոլակյան

Կ. Տ.

Հավելված 4
29 հունվարի 2024թ.
N 1-33/24-I/INSTLIT պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)

B - ամիսների քանակ

C - աշխատաժամանակի ռեժիմ

D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)

E - գումարային

ՀՀ դրամ

ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
Վարչասպասարկող անձնակազմ						
Որսկանյան Հերիքնազ Վանիկի	տնօրեն	500 000	12	հիմնական	40	6 000 000
Սոլակյան Սոնա Վարդգեսի	գլխավոր հաշվապահ	300 000	12	հիմնական	40	3 600 000
Մելքումյան Քրիստինե Խորենի	գործերի կառավարիչ-գործավար, տեխնիկական քարտուղար	175 000	12	հիմնական	20	2 100 000
Ղազարյան Վաչիկ Վանուշի	տնտեսվար	120 000	12	հիմնական	40	1 440 000
Հարությունյան Լաուրա Ժորայի	ավագ լաբորանտ	165 000	12	հիմնական	40	1 980 000
Թորոսյան Հայկուշ Ռաֆիկի	գրադարանավարուհի	120 000	12	հիմնական	40	1 440 000
Կիրակոսյան Հայկ Մկրտչի	պարետ	120 000	12	հիմնական	40	1 440 000
Տերտերյան Աստղիկ Աշոտի	մաքրուհի	106 000	12	համատեղություն	20	1 272 000
Ղազարյան Դերենիկ Զարմաիլի	պահակ	134 000	12	հիմնական	40	1 608 000
Գիտական անձնակազմ						
Բաժին Հայ հին և միջնադարյան գրականության բաժին						
Մուշեղյան Ալբերտ Վարազդատի	Առաջատար գիտաշխատող	419 989	12	հիմնական	40	5 039 868
Հովհաննիսյան Սուսաննա Գուրգենի	Առաջատար գիտաշխատող	419 989	12	հիմնական	40	5 039 868
Որսկանյան Հերիքնազ Վանիկի	Ղեկավար	224 876	12	ներքին համատեղություն	20	2 698 512
Նիկողոսյան Արքմենիկ Հրայրի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Վարդանյան Լուսինե Յուրիկի	Ավագ գիտաշխատող	300 276	10	հիմնական	40	3 002 760
Մելքումյան Քրիստինե Խորենի	Կրտսեր գիտաշխատող	89 950	12	ներքին համատեղություն	20	1 079 400
Եղիազարյան Վանո Ալբերտի	Գիտաշխատող	115 084	12	հիմնական	20	1 381 008
Բաժին Հայ նոր գրականության բաժին						
Մարգարյան Սիրուշ Ալեքսանդրի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Դեմիրճյան Պետրոս Հակոբի	Առաջատար գիտաշխատող	419 989	12	հիմնական	40	5 039 868
Ալեքսանյան Արամ Գարսևանի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Խաչատրյան Թադևոս Արշավիրի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Սարգսյան Նառա Ղարիբի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004

Փարսադանյան Սիրանուշ Հովիկի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Բաժին Նորագույն շրջանի հայ գրականության բաժին						
Աբրահամյան Սուրեն Սերյոժայի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Արեստակեսյան Ռուզաննա Բուլիկի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Ավետիսյան Սաթենիկ Հարությունի	Առաջատար գիտաշխատող	419 989	12	հիմնական	40	5 039 868
Սեյրանյան Լիլիթ Բորիսի	Առաջատար գիտաշխատող	419 989	12	հիմնական	40	5 039 868
Զարգարյան Արա Սմբատի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Հովհաննիսյան Միհրան Վահանի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Բաժին Սփյուռքահայ գրականության ուսումնասիրության բաժին						
Ավանեսյան Արմեն Ավանեսի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Բալայան Նաիրա Մելսիկի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Համբարձումյան Նաիրա Վալերիկի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Սարիբեկյան Հրաչյա Հարությունի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Խաչատրյան Մարգարիտա Մամիկոնի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Խաչատրյան Արամ Աշոտի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Բաժին Արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժին						
Բեջանյան Քրիստինե Հենրիկի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Էդոյան Հենրիկ Անտոնի	Առաջատար գիտաշխատող	419 989	12	հիմնական	40	5 039 868
Կարագյոզյան Գոհար Լևոնի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Հայրյան Զարուհի Գևորգի	Առաջատար գիտաշխատող	209 995	12	համատեղություն	20	2 519 940
Նավասարդյան Վահան Սուրենի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Գասպարյան Լուիզա Արեգի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Սողոյան Աստղիկ Վալերիանի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Հովհաննիսյան Քրիստինե Բանդիկի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Մուսայելյան Հովիկ Գաստելլեյի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Արսենյան Վահե Արամի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Բաժին Տեքստաբանության բաժին						
Իսահակյան Ավետիք Վիգենի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Սարգսյան Մարինե Հրանտի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Հակոբյան Անահիտ Պիոնի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Խաչատրյան Շողիկ Բորիկի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Գալոյան Էմմա Ժորիկի	Ավագ գիտաշխատող	150 138	12	համատեղություն	20	1 801 656
Գասպարյան Գուրգեն Էդուարդի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Վիրաբյան Լաուրա Կարապետի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Մանուկյան Արմեն Լևոնի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312

Ավետիսյան Լուսինե Արարատի	Գիտաշխատող	230 167	12	հիմնական	40	2 762 004
Սարինյան Մանե Սերգեյի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Խումբ Թումանյանագիտական խումբ						
Մնացականյան Եվա Ժորայի	Ղեկավար	349 881	12	հիմնական	40	4 198 572
Մկրտչյան Նունե Լենսերի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Ղազարյան Անի Վաչիկի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝						5777760
Ընդհանուր գումար՝						177 646 200

Կազմակերպության տնօրեն՝ (ստորագրություն) Հերիքնազ Վանիկի Որսկանյան

Կազմակերպության անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավար՝ (ստորագրություն) (ԱԱՀ)

Կ. Տ.

Հավելված N 6
«29» հունվարի 2024 թ.
N **1-33/24-I/INSTLIT** պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Հայ գրականության պատմություն և գրականության տեսություն» և «Հայ դասականների երկերի գիտական հրատարակություն» ծրագրի
(ծրագրի անվանումը)

h/h	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
1	Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունները ժամանակի գրաքննադատական մտքի գնահատմամբ	Հ. Թումանյանի ստեղծագործության ուղեկից գրաքննադատության արձագանքների ամբողջական ուսումնասիրություն՝ 1890-1923թթ. հայ գրաքննադատական մտքի զարգացման միտումների ու գեղագիտական սկզբունքների բացահայտման առումով:	Բազմաբնույթ ու մեծածավալ նյութի՝ լրագրային առաջնորդողներ, հոդվածներ, գրախոսություններ, մենագրական մեծ ու փոքր ուսումնասիրություններ, հավաքագրում, վերլուծում:	Մարտ
2	Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու 13 հատորով, հտ. 2-րդ	Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու 13 հատորով, հտ. 2-րդ (1915-1931թթ, պոեմներն ու բալլադները)	Կատարել բնագրերի ճշտում, նոր ծանոթագրություններ, կատարել լրացումներ, հավելել նոր տեքստային տարբերություններ, որոնք չեն եղել նախորդ ակադեմիական հրատարակությունում	Մայիս
3	Եղիա Տեմիրճիպաշյան. կյանքը և ստեղծագործությունը	Նվիրված է գրող, հրապարակագիր, իմաստասեր, մանկավարժ, խմբագիր Եղիա Տեմիրճիպաշյանի կյանքին և ստեղծագործությանը:	Ընդգծել Եղիա Տեմիրճիպաշյանի առանձնահատուկ տեղը հայ գրականության պատմության և, մասնավորապես, 19-րդ դարի վերջին քառորդի (80-90ական թթ.) ազգային-հասարակական, կրթական-մշակութային	Հունիս

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով:*

			զարգացման մեջ:	
4	Армянская поэзия в рецепции русских поэтов конца XX, начало XXI века	Ուսումնասիրությունը նվիրված է ռուս-հայկական գրական կապերին, որտեղ ներկայացվել և վերլուծվել են ռուս բանաստեղծների թարգմանությունները: Ուսումնասիրված են նաև ռուս բանաստեղծների թարգմանչական սկզբունքները:	Աշխատանքը բաղկացած է ներածությունից, յոթ գլուխներից, վերջաբանից:	Հուլիս
5	Նիկոլ Աղբալյան, Պատմություն հայոց գրականության: Երկերի ամբողջական ժողովածու 7 հատորով: Հատոր առաջին:	Գրականագետ, գրաքննադատ, մանկավարժ, հասարակական-քաղաքական գործիչ Նիկոլ Աղբալյանի «Պատմություն հայոց գրականության» աշխատությունը, որը ամփոփում է հեղինակի՝ հայ հին գրականության պատմությանը նվիրված ուսումնասիրություններն ու դասախոսությունները:	Կատարել տեքստի ճշտումներ (մոտ 400 էջ), ծանոթագրել, ներկայացնել անվանացանկ:	Օգոստոս
6	Միջազգային գիտաժողով՝ նվիրված Վ. Բրյուսովի մահվան100-րդ տարելիցին	Ի մի կբերվեն զեկուցումներ՝ նվիրված Բրյուսովի բանաստեղծական, թարգմանական, գրաքննադատական ժառանգությանը:	Զեկուցումները հարմարեցնել հղվող ամսագրերում տպագրվող հոդվածների ձևաչափին՝ ընդլայնելով նաև առաջ քաշված հիմնախնդիրների շրջանակը:	Սեպտեմբեր
7	Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու «Մարդու անհատականության փոխակերպումների խնդիրը 19-րդ դարավերջի համաշխարհային և հայ գրականության (փոքր կտավի) արձակ գործերում» խորագրով	Նվիրված է 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի համաշխարհային և հայ գրականության փոքր կտավի արձակ գործերում մարդու անհատականության խնդիրներին, փոքր մարդու պրոբլեմին փիլիսոփայական տարբեր հոսանքների, հոգեբանական ու գրական տարբեր դպրոցների հայեցակետով:	Զեկուցումները հարմարեցնել հղվող ամսագրերում տպագրվող հոդվածների ձևաչափին՝ ընդլայնելով նաև առաջ քաշված հիմնախնդիրների շրջանակը:	Հոկտեմբեր
8	«Գրական ուղղությունները և դպրոցները	Վաղ կլասիցիզմից մինչև 20-րդ դարի 20-ական	Համեմատական գրականագիտության և	Հոկտեմբեր

	համաշխարհային դասական գրականության և ազգային գրականությունների համատեքստում» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու	թվականներ. ընդհանրությունների, առանձնահատկությունների ընդգծում:	գրականության տեսության ժամանակակից մեթոդներով անդրադառնալ 18-19-րդ դարերի գրական ուղղություններին համաշխարհային և հայ դասական գրականության համատեքստում:	
9	Խաչատուր Աբովյանի կյանքի և գործունեության տարեգրություն, հատոր առաջին, 1809-1833	Ներկայացվում են Աբովյանի նախնիներին առնչվող վավերագրեր՝ սկսած 1767 թվականից, Աբովյանի ծննդից մինչև դորպատյան ուսումնառության առաջին շրջանն (1809-1833) ընդգրկող փաստական տվյալները՝ ծանոթագրություններով, նկարներով, անձնանունների բառարանով, տեղանունների ցանկով:	Կազմել քննական տարեգրության ժանրի չափանիշներին համապատասխան՝ կենսագրությունը՝ օր-ամիս-տարի շղթայի մեջ՝ զուգահեռաբար ներկայացնելով նաև 19-րդ դարի առաջին կեսի հայ, անդրկովկասյան և եվրոպական իրականության պատկերը:	Նոյեմբեր
10	«Պարույր Սևակ-100» գիտաժողովի զեկուցումների ծողովածու	Ի մի կհավաքվեն զեկուցումներ՝ նվիրված Պ. Սևակի բանաստեղծական, հրապարակախոսական, թարգմանական, գիտական ժառանգությանը՝ նվիրված հայ գրականության զանազան խնդիրներին, մայրենի լեզվին, հայ գրականության գալիք օրվան:	Զեկուցումները կհարմարեցվեն հղվող ամսագրերում տպագրվող հոդվածների ձևաչափին:	Նոյեմբեր
11	«Սերգեյ Սարինյան-100» հայագիտական գիտաժողովի՝ զեկուցումների ժողովածու:	Նվիրված է ակադեմիկոս, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի վարիչ Սերգեյ Սարինյանի ծննդյան 100-ամյակին: Կներկայացվի հայագետն ու գրականության պատմաբանը, կվերլուծվի գիտնականի գրականագիտական ու քննադատական	Զեկուցումները կհարմարեցվեն հղվող ամսագրերում տպագրվող հոդվածների ձևաչափին:	Նոյեմբեր

		գործունեությունը:		
12	Ավետիք Իսահակյանի երկերի լիակատար ժողովածուի VIII հատոր, երրորդ գիրք	Ցույց է տրվում առկա փոփոխությունները և լրացումները, նշվում ազգային, քաղաքական գործոնները, որոնք նպաստել են նոր տարբերակների առաջացմանը:	«Ուստա Կարո» վեպի երկրորդ տարբերակի երրորդ գիրքը տպագրվում է բնագրային տարբերակներով ու ծանոթագրություններով:	Դեկտեմբեր

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր) ____________ (____________)

(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ ____________ (____________)

(ստորագրություն) (անուն ազգանուն)